ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Մովսես Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել, ապրիլի 29-ից մայիսի 3-ը, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Եվրահանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2024թ. ապրիլի 29-ից մայիսի 3-ը EC-INTPA/2024/EA-OP/0028 Alternative Water Supply (Այլընտրանքային ջրամատակարարման սարքավորումների մատակարարում) մրցույթի գնահատող հանձնաժողովի խորհրդակցություններին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Եվրահանձնաժողովի կողմից ՀԱԷԿ-ին օժանդակության նպատակն է.
- ապահովել մշտական տեխնիկական աջակցություն, միջուկային և շահագործական անվտանգության բնագավառում.
- բարձրացնել անվտանգությունը ՀԱԷԿ-ում՝ «սթրես-թեստերի» արդյունքների հիման վրա.
- անվտանգության մշակույթի և դրա կայունության հետագա բարելավում.
- ՀԱԷԿ-ում միջուկային երաշխիքների հետագա ուժեղացում.
- շահագործման մեթոդների անվտանգության հետագա բարելավում

Խոսվել են նաև ՀԱԷԿ-ի հետագա պլանների և ծրագրերի մասին՝ բարձր գնահատելով մինչ օրս ԵՄ կողմից ՀԱԷԿ-ին տրամադրված աջակցությունը, և կարևորվել այդ համագործակցությունը շարունակելու անհրաժեշտությունը:

Հիմնականում, ամբողջ գործուղման ընթացքում մրցութային գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի մյուս ներկայացուցիչների հետ միասին քննարկել ենք Եվրամիության օժանդակությամբ իրականացվող (Այլընտրանքային ջրամատակարարման սարքավորումների մատակարարում) մրցույթին մասնակցած ընկերության կողմից ներկայացված առաջարկության, տեխնիկական մասով համապատասխանությունը տեխնիկական արաջադրանքի հետ:
Արդյունքում, ունենալով մեկ մասնակից Սլովակիայի Հանրապետությունից «Այլընտրանքային ջրամատակարարման սարքավորումների մատակարարում» մրցույթին,կազմվեց 17 կետից բաղկացած հարցաշար,մրցույթի մասնակցի կողմից

լրացուցիչ տեխնիկական մանրամասներ ներկայացնելու համար: Մրցույթի արդյունքները դեռ վերջնական չեն, գտնվում են քննարկման փուլում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Եվրամիությունն իր մշտական աջակցությունն է ցուցաբերել ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացման մի շարք ծրագրերի իրականացման գործում. նման շուրջ 50 ծրագիր է իրագործվել ատոմակայանում:
ՀԱԷԿ-ում Եվրոպական միության (ԵՄ) օգնության ընդհանուր նպատակն է փոխանցել գործառնական անվտանգության մշակույթը և աջակցել միջուկային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների ներդրմանը՝ տրամադրելով ԵՄ խորհրդատուի փորձ: Այս նախագծի նպատակն է աջակցել Հայաստանի միջուկային օպերատորին, բարձրացնել միջուկային անվտանգությունը ԱԷԿ-ում և համապատասխանեցնել այն միջազգային չափանիշներին:
Հանդիպում ունեցանք Եվրոպական հանձնաժողովի Միջազգային գործընկերության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Մարիետա Յագերի, Սիլյա Կասմանի (Համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ) և Ջեյմս Բրեդբրիի հետ: Քննարկվեցին մայիսի 15-ին Հայկական ԱԷԿ պատվիրակության կայանալիք այցի հետ կապված մանրամասները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Քննարկումների ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, այնուամենայնիվ վերահաստատվել է, որ Եվրոպական միության կողմից կշարունակվի միջուկային էներգիայի զարգացման ոլորտում ՀՀ-ին, այդ թվում նաև ՀԱԷԿ-ին տրամադրվող աջակցությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ , կառուցողական, աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել այցի նպատակին հասնելու տեսանկյունից:
Հանդիպման ավարտին կողմերը հավաստեցին փոխհամագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը՝ ի նպաստ ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն

Մ. Վարդանյան